ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЗДРАВООХРАНЕНИЯ РА
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA

Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ անվան
ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
АОЗТ НАЦИОНАЛЬНЫЙ ЦЕНТР ОНКОЛОГИИ им. В. А. ФАНАРДЖЯНА
CJSC NATIONAL CENTER OF ONCOLOGY named after V. A. FANARJIAN

ՈՒԱԿ NCO

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ, ՖԱՆԱՐՋՅԱՆ Փ.76
ЕРЕВАН, КАНАКЕР, ул. ФАНАРДЖЯНА, 76
76 FANARJIAN str., YEREVAN, KANAKER, ARMENIA

Հեռ. (+374 10) 20-94-02

№ 414
«22» 04 2024

Որոշում N ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/53

«ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով 11.03.2024թ. հայտարարված «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/53» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտը կազմվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, այն է՝ հայտում բացակայել է դիմում հայտարարությունը՝ Հավելված 1-ը և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրությունը Հավելված 1.1-ը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետը՝ «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-24/53» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 03.04.2024թ.-ի թիվ 1 որոշմամբ որոշեց կասեցնել նիստը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն վերջինիս կողմից շտկված փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

Ղեկավարվելով Կարգի 42-րդ կետով, գնահատող հանձնաժողովը 05.04.2024թ-ի թիվ 2 որոշմամբ որոշեց «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն Մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մասնակիցը արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելով խախտել է գնման ընթացակարգով ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը, որոշում եմ «ԼԱ ԻՄՊՈՐՏ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՏՆՕՐԵՆ՝ ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Խաչատրյան
Գնումների բաժնի ղեկավար
Հեռ. /010/ 20 50 50 /102/